ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 11 մարտի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1.Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը 23.02.2009թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ կետի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականության հարցը:

2.Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (ժդ) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Քաղաքացի Ռ. Թորոսյանը ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացրել փաստաթղթերի մի փաթեթ, որը բաղկացած է դրանում ընդգրկված դիմումների ցանկից և կցված բուն դիմումներից: Ըստ այդմ, ցանկին կցված է 26 դիմում: Դրանցից 8-ում դիմողը վիճարկում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 69-րդ հոդվածի 8-րդ կետի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականությունը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ կետի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականության վիճարկման վերաբերյալ Ռ. Թորոսյանը նախկինում յոթ դիմում է ներկայացրել սահմանադրական դատարան /08.12.2008թ. մտից թիվ 4-247, 27.12.2008թ. մտից թիվ 4-261, 16.01.2009թ. մտից թիվ 6-100,

30.01.2009թ. մտից թիվ 6-105, 10.02.2009թ. մտից թիվ 4-44, 10.02.2009թ. մտից թիվ 4-42, 13.02.2009թ. մտից թիվ 4-54/, որոնցից մեկը՝ մտից թիվ 4-247 դիմումը, սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմի՝ 24.12.2008թ. որոշմամբ ընդունվել է քննության: Մյուսների քննությունը մերժվել է: Նշենք, որ քաղաքացի Ռ. Թորոսյանի կողմից ներկայացված այդ դիմումները, ըստ էության, նույնաբովանդակ դիմումներ են, դրանք բոլորն էլ ունեն նույն բովանդակությունը և նույն հիմնավորումները: Դրանցում առկա միակ տարբերությունն այն է, որ այլ է միայն դիմումների առաջին տողում կատարված նշումը, որը, սակայն, ոչ մի կերպ չի ազդում դիմումների բովանդակության վրա:Հետևաբար, իր դիմումի հիման վրա արդեն քննության ընդունած գործի առկայության պայմաններում, նույն հարցի վերաբերյալ նոր դիմում ներկայացնելու պարագայում անձը չի կարող համարվել պատշաճ դիմող:

4.«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասին 3-րդ պարբերության համաձայն .«Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով, որի ժդ) կետի համաձայն պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն ունեն. «դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով»:

Սահմանադրական դատարան հասցեագրված իր դիմումով քաղաքացի Ռ. Թորոսյանը բարձրացրել է օրենքի դրույթի սահմանադրականության հարց, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27 հոդվածով և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Չբավարարել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը և դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝